ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «22» մայիսի 2015 թ.

ՀՐԱՄԱՆ № 18-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի N 33-Լ ՀՐԱՄԱՆՈՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ 1-ՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Գիտական և գիտատեխնիկական փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահի 2012 թվականի հոկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունները հաստատելու և կոմիտեի նախագահի 2010 թվականի դեկտեմբերի 16-ի N 38-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 33-Լ հրամանով հաստատված հավելված 1-ի 12-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ երթակետերով.

«7) գիտական և գիտատեխնիկական փորձաքննության բնագավառի իրավական ակտերի նախագծերի մշակում.

8) գիտական և գիտատեխնիկական պետական փորձաքննության մեթոդական և կազմակերպատեխնիկական հիմքերի, փորձաքննության կազմակերպիչներին և փորձագետներին առաջադրվող պահանջների մշակման աշխատանքների իրականացում.

9) գիտական և գիտատեխնիկական փորձաքննության պետական հավատարմագրման կարգի և չափանիշների մշակման աշխատանքների իրականացում:»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ